Սրբազան Հայրն իր քարոզում հավուր պատշաճի և հանգամանալից մեկնաբանեց խաչի խորհուրդը և մեզ՝ հայերիս համար նրա պաշտամունքի առարկա լինելու հանգամանքը: Սրբազանն իր գոհունակությունն ու գնահատանքը հայտնեց ԱԺ պատգամավոր Կարեն Սարիբեկյանին նրա կատարած բարեգործությունների՝ հատկապես Ս. Գևորգ եկեղեցու վերականգնման ազգանվեր աշխատանքի համար: Սեպուհ Սրբազանն իր ուրախությունը կիսեց գյուղացիների հետ և հայտնեց, որ առաջիկայում կվերաօծվի տարիներ ի վեր չգործող աղոթատեղին, ուստի բարեպաշտ ժողովուրդը հնարավորություն կունենա իր աղոթքը բարձրացնել առ Աստված այս պատմական և հնամենի եկեղեցում: Սրբազանը հուսադրեց ներկաներին, որ այլևս չեն խարխափի օտարամուտ տարբեր հոսանքների որոգայթներում և հորդորեց հատկապես երիտասարդությանը, որ քրիստոնեական արժեքներով կենցաղավարեն և հավատարիմ մնան մեր ազգային արժեքներին ու ինքնությանը:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՕԾՎԵՑ ԿՈԹԻ ԳՅՈՒՂԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հուլիսի 13-ին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի հանդիսապետությամբ և ձեռամբ կատարվեց Կոթի գյուղի Ս. Աստվածածին (1900 թ.) եկեղեցու վերաօծման արարողությունը: Ձեռամբ Սրբազան Հոր և մասնակցությամբ առաջնորդական փոխանորդ Տ. Սասուն ծայրագույն վարդապետի և թեմի հոգևոր դասի՝ օծվեցին Ս. Սեղանը, Խորանը, Մկրտության Սուրբ Ավազանը: Արարողության ավարտին նորաօծ եկեղեցում պատարագ մատուցեց Տ. Սիմեոն քահանա Առաքելյանը:

Գյուղի հավատացյալ ժողովրդի համար այդ օրը նվիրական ու պատմական էր, քանզի 2007 թ. այդ նույն օրը Սրբազան Հոր ձեռամբ օծվել էր եկեղեցու խաչը: Եկեղեցու օծման արարողության ավարտին Սեպուհ Սրբազանն իր օրհնության ու շնորհավորական խոսքն ուղղեց կոթեցիներին և բոլոր ներկաներին. «Գոհություն ենք հայտնում Բարձրյալն Աստծուն, որ մեր տիրախնամ թեմում ևս մեկ աղոթքի տուն իր դռները բացեց: Ուստի, սիրելի՛ կոթեցիներ, ձեզ ենք հանձնում հավատքի բանալին՝ այս սուրբ եկեղեցին ու Ավետարանը: Այսուհետ ձեր սրտաբուխ աղոթքները, որ կմատուցվեն այս սուրբ տաճարում, թող ուղղվեն մեր Մայր Եկեղեցու անսասանության, մեր անկախ հայրենիքի բարգավաճման ու հայ ժողովրդի բարօրության համար»:

Սրբազանը մեծարելով եկեղեցու բարերարներ՝ համագյուղացիներ Սահակ Սերգոյի և Արտեմ Դիմիտրիի Խաչատրյաններին, Գուգարաց թեմի հոգևոր դասի և ժողովրդի անունից իր երախտագիտությունը հայտնեց և հանուն Վեհափառ Հայրապետի օրհնեց ու բարի մաղթանքներ հղեց ի հիշատակ այս պատմական օրվան:

Արարողությանը ներկա էին Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը, Կոթիի համայնքապետ Ֆելիքս Մելիքյանը, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ, համայնքապետեր, բազմաթիվ հյուրեր և համայնքի անդամներ:

Սուրբ Պատարագի ավարտին ներկաներին բաշխվեց երախտիքի ու գոհության մատաղ՝ գյուղացիների արևշատության, հարազատ գյուղի անսասանության և Մայր Հայրենիքի ու Սուրբ Եկեղեցու պայծառության համար:

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ